VAHAKN N. DADRIAN, The Naim-Andonian Documents on the World War I Destruction of Ottoman Armenians: The Anatomy of a Genocide, International Journal of a Middle East Studies, 1986, vol. 18, № 3, pp. 311—359.

ՎԱՀԱԳՆ ԴԱԴՐՅԱՆ, Նայիմ-Անտոնյան փաստաթղթերը առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ արևմտահայերի բնաջնջման մասին. ցեղասպանության վերլուծությունը

Նյու Յորքի նահանգային համալսարանի դասախոս, սոցիոլոգ և ցեղասպանության պատմության մասնագետ Վ. Դադրյանի հոդվածը՝ հագեցած հարուստ ծանոթագրություններով, գրված է թուրքական, գերմանական ու ամերիկյան բազմաթիվ աղբյուրների և վավերագրերի հիման վրա։ Հեղինակն իր առջև դրել է Նայիմ բեյի և Արամ Անտոնյանի փաստաթղթերի վավերականությունը գիտականորեն հիմնավորելու խնդիրը։ Կասկածից վեր է այդ փաստաթղթերի չափազանց կարևորությունն ու արժեքը, քանի որ դրանք կատարված հանցագործությունների մասին պետական գաղտնիքների սկզբնաղբյուր են։

Հայտնի է, որ վերջին տասնամյակի ընթացքում գիտական հրապարակի վրա սկսեցին երևան գալ հայկական ցեղասպանության մասին գրված ուսումնասիրություններ, և ցեղասպանության ճանաչման հարցը աստիճանաբար դարձավ միջազգային ուշադրության առարկա։ Այս հանգամանքը չէր կարող չանհանգստացնել Թուրքիայի ղեկավար շրջաններին, ինչպես նաև պատմաբաններին, որոնք դանազան միջոցների դիմեցին ու դեռ շարունակում են ամենուրեք գործունեություն ծավալել՝ խեղաթյուրելու և սևացնելու պատմական անժխտելի ճշմարտությունները, աշխատելով հերքել Իթթիհադի պարագլուխների կողմից հայ ժողովրդի բնաջնջումը հրահանգող բոլոր հեռագրերի վավերականությունը և հրապարակելով կեղծ ու միանգամայն շինծու հեռագրեր ու հրամանագրեր։

Վ. Դադրյանը հոդվածում քննության է առնում Թալեաթի կողմից ուղարկված հիսուն գաղտնագիր հեռագրերի և Հատուկ կազմակերպության շարդարար ջոկատների պարագլուխներից մեկի՝ Բեհաեդդին Շաքիրի երկու կարևոր նամակների բովանդակությունը, միաժամանակ, տալով այդ հեռագրերի թարգմանության մեջ տեղ գտած թվական անճշտությունները, որոնք, Վ. Դադրյանի կարծիքով, արվել են միտումնավոր, վերոհիշյալ ոճրագործների գաղտնի հաղորդակցությունների ժամանակ։

Հեղինակը ուսումնասիրության մեջ անդրադառնում է Նայիմ բեյի փաստաթղթերի վավերական լինելու, Արամ Անտոնյանի կատարած թարգմանության ճշգրտության և բնագրին հարազատ մնալու հարցերին։ Դրանք հաստատելու նպատակով նա մեջբերումներ է կատարում թուրք հեղինակների վկայություններից։ Այդ փաստաթղթերի բովանդակությունը ճշգրտելու համար Վ. Դադրյանը օգտագործել է թուրքական զինվորական ատյանի նյութերը և այն բոլոր վկայությունները, որոնք տրվել էին ատյանի առջև։

Օգտագործելով երկու թուրք պատմաբանների՝ Բայուրի և Բեդևի Գուրանի աշխատությունները, հոդվածագիրը բացահայտում է Նազըմ բեյի և Բեհաեդդին Շաքիրի մութ նպատակները։ 1906—1908 թվականներին, երբ Իթթիհադը դաշնակցություն կուսակցության հետ համատեղ պայքար էր մղում Աբդուլ Համիդի վարչակարգի դեմ, վերոհիշյալ ոճրագործները դաշնակցության հետ իրենց կապերը ժամանակավոր են համարել այնքան, մինչև որ իշխանությունը կենտրոնանա իրենց ձեռքին։ Այսպես, Բեհաեդդին Շաքիրը իր նամակներից մեկում նշում է. «Մենք պետք է օգտագործենք նրանց (դաշնակցականների—Ն. Ջ.) ռեսուրսները։ Հենց որ վերցնենք իշխանությունը, կհեշտանա դաս տալը նրանց, ովքեր ձգտում են վարչական ինքնավարության»։ Հենվելով թուրքական աղբյուրների վրա Վ. Դադրյանը ցույց է տալիս Իթթիհադի պարագլուխների նենգ ու դավադիր նկարագիրը, նշելով Թալեաթի և Ջեմալ փաշայի անձնական քարտուղար Ֆուլիհ Բեֆքի Աթայի հուշերը։ Այնտեղ Թալեաթը հանդես է գալիս որպես ստախոս և դաժան անձնավորություն։

Հոդվածում օգտագործված են նաև Թուրքիայի դաշնակից երկրների՝ Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի դիվանագետների, զինվորական բարձրաստիճան սպաների և հրամանատարների վկայությունները։ Դրանցում ԻԹԹիհադի պարագլուխները մեղադրվում են ցեղասպանության և տեղահանությունների կազմակերպման մեջ։ Հիշատակության արժանի է հատկապես գերմանացի գնդապետ Շտանգեյի գաղտնի տեղեկագիրը։ Այնտեղ նկարագրվում են թուրքական բանտերից աղատ արձակված ջարդարար ավազակախմբերի (չեթեներ) գազանությունները։ Ականատես լինելով կոտորածներին, գերմանացի սպան հաստատում է պատերազմի ժամանակ թուրք զինվորականության կողմից հայ ժողովրդի ոնչնչումը կազմակերպելու կանխամտածված ծրագրի փաստը։

Հոդվածին կից ծանոթագրությունների մեջ կան նաև բազմաթիվ վկայություններ ու առանձին դրվագներ թուրք իշխանությունների կողմից Բիթլիսի, Տարոնի, Մշո դաշտի, Սասունի հայ ազգաբնակչության զանգվածային սպանությունների ու հրկիզումների մասին։ Հատկապես ողբերգական է Թաշխոտ կոչված վայրում Բիթլիսի կառավարիչ Մուստաֆա Աբդուլ-հալրքի կազմակերպած հազար հայ որբերի ողջակիզումը, երբ «օրերով լսվել են երեխաների հոգեվարքի հեծեծանքները, և այդ անմարդկային վայրագության ժամանակ ոճրագործը ամբոխի ներկայությամբ բարձրաձայն հայտարարել է, որ «Թուրքիայի ապահովությունը պահանջում է իսպառ վերացնել հայ անունը հայկական գավառներում»։

Վերլուծելով իր ձեռքի տակ եղած տեղեկագրերն ու աղբյուրները, Վ. Դադրյանը հաստատում է Նայիմ-Անտոնյան փաստաթղթերի վավերականությունը և եզրակացնում, որ հայկական նեղոնը ունի ցեղասպանության բնույթ և ԻԹԹիհադի ղեկավարների ծրագրած ու կանխամտածված ոճիրն է։ Նաև ի դերև է հանում Նայիմ-Անտոնյան վավերաթղթերի վավերականությունը ժխտող թուրք կեղծարար պատմաբանների և նրանց հովանավորող իշխանությունների գործադրած անօգուտ ջանքերը։

Ն. Տ. ՉԱԼԸԹՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու